

ՀՀ Կոտայքի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար.

Երթուղու					
N/N ը/կ	Անվանումը և համարը	Սկզբնակետը (ավտոկայան, ավ տոկայարան, երթակարգավար ական կետ)	Վերջնա կետը (ավտոկայան, ավտոկայարա ն երթակարգա վարական կետ)	Տեսակը (ավտոբուսային, միկրոավտոբուս ային)	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1	Աբովյան-Բյուրեղավան	ք. Աբովյան	ք. Բյուրեղավան	միկրոավտոբուսային	12

Մրցույթի մասնակցության պայմանները կտրամադրվեն մրցույթային փաթեթով:

Մրցույթը տեղի կունենա 2017թ. Հունիսի 6-ին ժամը 11.00-ին Աբովյանի ավտոկայանում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10.00-16.00 հետևյալ հասցեում ք. Շրազդան, Կենտրոն, մարզպետարանի շենք 2-րդ հարկ, քաղաքաշինության վարչություն: Հայտերի ընդունման վերջին ժամկետը 2017թ հունիսի 30-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարել /0223/ 2-85-27 հեռախոսահամարով:

Մրցույթն անցկացվում է ՀՀ Կառավարության 2001 թ-ի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՃԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինակայինությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինակայինությունը հաստատող փաստաթուղթ.
9. Ավտոբուսների նախաաղբերային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցույթային կարգով պահանջվելու դեպքերում.
10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակազմի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցույթային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաաղբերային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:
Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Բսկականի հետ ճիշտ է» գրառումով և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Բսկականի հետ ճիշտ է» գրառումով և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը: